Այս ճաշոցը մեծ դիրքով և շատ մաքուր գրուած է, առաջին և վերջին թղթերն քանդուած լինելով՝ հին յիշատակարաններն ևս անյայտացած է։

Գիւղիս հիւսիսն Խըլխլեկ անուամբ բարձր դար մի կայ, որ լիժ (յղկեալ) քարերէ կազմուած է, երբէք ձիւն չի բռնէր ձմեռն և վերան ևս խոտ չբուսնիր, յատակից թղթղկոցի ձայն կը լսուի միշտ։

Գիւղիս բնակիչներն Բասեանի, Պուլանխայ, Պանազկերտի և Խնուսայ գաղթականներէ կազմուած և 110 տնէ բաղկացած են և ունին լաւ վիճակ. դաշտիս գիւղօրէից մէջ ամենապատուական վարելահողեր և ունի լեռնային մասի մէջ մարգագետիններ, որով այս գիւղացիքս որք դրեթէ քրդերու հարստահարութիւնից հեռի կը գտնուին, որոց հետ շատ շփում չունենալուն՝ բաւական լաւ վիճակ ունին։ Իւրեանց հարստութիւնն է իւրեանց կալուածը, անասունները և ցորեանը, որ ամեն տարի մեծ քանակութեամբ կը հորեն, առթի կսպասեն որ թանկագին վաճառեն, շատ անգամ պաշտօնեաներու զրպարտութենէ երկիւղ կրելով՝ կը հանեն ցորեանը, ամանագին վաճառելով՝ կաշառք կտան, որպէս զի զրպարտութեանց զոհ չգնան։

Այս գիւղը տաս տարիէ ի վեր հաստատուած է Խլաթեցի Տէր Գրիգոր, որ իւր վարուողութեամբ ժողովրդեան յոյժ սիրելի դարձած էր, այժմ նա վախճանած է, նորա որդին, զարքացած երիտասարդ Ալէքսանը իւր հօր տեղ հօր անունով քահանայ ձեռնադրուած է. յուսալի է գիւղիս համար մեծ յառաջադիմութիւն։